ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

18 ՀՈՒԼԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Սահակ Գյուլինյանը, Էմմա Մարգարյանը, Արտյոմ Գեվորգյանը, Հովհաննես Գասպարյանը, Գոռ Մեծոյանը, Վահագն Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Գրիգոր Հալլաբյան, Ստելլա Բադալյան, Խոսրով Թարվերդյան, Լիլիթ Եղիազարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Անահիտ Միրզոյանը

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2- ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,պահանջներով ՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին, լսելով համայնքի 2025 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ որոշում է.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71_Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1.8-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1- N 4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ)

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 17-ի թիվ 2/փ-197 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի՝Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Էդգար Աշոտի Հովհաննիսյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Էդգար Աշոտի Հովհաննիսյանի սեփականություն հանդիսացող 07-064-0389-0011 կադաստրային

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14³ հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 26-ի թիվ 2/փ-205 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի՝Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Արտուշ Մնացականի Ավանեսյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան Արտուշ Մնացականի Ավանեսյանի սեփականություն հանդիսացող 07-064-0227-0014 կադաստրային ծածկագրով 0,34824 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով՝Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի 07-025-0205-0077, 07-025-0563-0001 և 07-025-0564-0001 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող դաշտամիջյան ճանապարհն անվանակոչել թվային կարգով՝ 23-րդ փողոց:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի 07-025-0513-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող դաշտամիջյան ճանապարհն անվանակոչել թվային կարգով՝ 24-րդ փողոց:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղում թվային կարգով փողոցներ անվանակոչելու մասին» N 67-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 68-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882 որոշումն ուժը կորցրած ճանաչելու հանգամանքը, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների և ոչ առեվտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին>> N 68-Ա որոշման նախաբանում կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1.1<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882 որոշման>> բառերը փոխարինել <<ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 31.10.2007 թ.N787-Ն հրաման>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18- Ի ԹԻՎ 8-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-դ հոդվածի դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 18-ի թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.Նոր Հաճըն համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի բյուջեի 2 -րդ եռամսյակի կատարման մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

3 Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

4.Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

5.Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղում թվային կարգով փողոցներ անվանակոչելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 27-Ի N 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

7.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 27-ի N 68-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕԶՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՍՈՖԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Անահիտ Միրզոյանը

_____